ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 025-6

«Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

«07» հոկտեմբերի 2020թ. **ք.Երևան**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը,

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից, ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար **Լուսինե Քոչարյանի,** որը գործում է կանոնադրության հիման վրա

և

Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ-ն

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ ժ/պ Հովհաննես Մադոյանի, որը գործում է Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պատվիրատուի և Կատարողի միջև 2020 թվականի հունվարի 16-ին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» թիվ ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-025 պայմանագրի 8-րդ բաժնում կատարել փոփոխություն՝ Կատարողի սպասարկող բանկ և բանկային հաշիվ տողերը շարադրելով նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ

Սպասարկող բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ

Բանկային հաշիվ՝ 163008142032

2. Սույն համաձայնագիրը իր հավելվածով կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից ստորագրվելու պահից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

Առողջապահության նախարարություն

Գլխավոր քարտուղար՝ Լուսինե Քոչարյան

KOCHARYAN LUSINE 6509770407

Подписано: KOCHARYAN LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM
Дата: 2020.10.07 12:52:47 +04'00'

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ՝

Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ

Տնօրեն՝ ժ/պ Հովհաննես Մադոյան

/ստորագրություն/